APAGA

Quarterly

آپاگا

فصلنامه

فصلنامه فرهنگی – اجتماعی مطالعات شرق شناسی ، ایرانشناسی و ارمنی شناسی

An International Journal of Oriental Studies



ارمنستان باستان

ISSN 1682-5438

شماره ۹۰ تابستان(شهریور) ۱۴۰۱

No. 90, Սեպտեմբեր, 2022

ԱՊԱԳԱ

Հանդես

APAGA

Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես

An International Journal of Oriental Studies

Սադոկ Բարոնչ

ISSN 1682-5438

Համար 90 Սեպտեմբեր, 2022 թ.

No. 90 September 2022

ԱՊԱԳԱ Համար 90 Սեպտեմբեր, 2022 APAGA

No. 90, September, 2022

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես

An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր

License-holder, Publisher & Editor-in-Chief

էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian,

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան

POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.ApagaOnline.com and www.apagamonthly.4t.com

E-mail: apaga98@hotmail.com **ISSN 1682-5438**

Բովանդակություն

Հայերեն Վիեննայի պատերազմը և Հայերը

Անգլերեն Սիմեոն Լեհացի

Պարսկերեն Պատմական Հայաստանը, Առևմտ. Հայաստանի վարչական բաժանումը

Contents

Armenian Vienna battle and the Armenians

English Simeon of Poland

Persian Ancient Armenia, Adm. Division of Western Armenia

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: $ 20 per year Գինը 10000 ռիալ

آپاگا فصلنامه بین المللی ایرانشناسی و ارمنی شناسی

شماره ۹۰ تابستان ۱۴۰۱

صاحب امتیاز و مدیر مسئول

ادیک باغداساریان

صندوق پستی شماره ۹۴۸۸-۱۵۸۷۵

تهران - ایران

نشانی اینترنت www.ApagaOnline.com و www.apagamonthly.4t.com

پست الکترونیکی **apaga98@hotmail.com**

ISSN 1682-5438

فهرست

فارسی ارمنستان باستان ، تقسیمات اداری ارمنستان غربی

ارمنی نبرد وین و نقش ارمنیان در آن

انگلیسی تاریخ سیمون لهاتسی

مقالات و دیدگاه های مندرج در نشریه لزوما" بیانگر موضع "آپاکا" نیست.

نشریه در حک و اصلاح مقاله ها مجاز است.

مقالات و مطالب رسیده باز گردانده نمی شود.

استفاده از مطالب "آپاگا" با ذکر ماخذ آزاد است.

شمارگان ۱۰۰ بها ۱۰۰۰۰ تومان

چاپ احسان-تهران چهارراه ولیعصر پلاک ۱۱۴۸

Վիեննայի ճակատամարտը և Հայերը

Համադրեց՝ Էդ. Գերմանիկը

Հակառակորդներ

Սրբազան լիգա.

Ռեչ Պոսպոլիտա
Սրբազան Հռոմեական կայսրություն
Սաքսոնիա
Ֆրանկոնիա
Բավարիա
Շվաբիա
Զոպորոժյան կոզակներ
Հայեր

Մոտ 84450 զինվոր,
այդ թվում՝ 5000 հայեր,
152 հրանոթ
Հրամանատար՝ Լեհաստանի թագավոր և Լիտվիայի Մեծ իշխան Յան III Սոբեսկի

Օսմանյան կայսրություն

Ղրիմի խանություն
Տրանսիլվանիա
Մոլդովական իշխանություն
Վալախիա

Մոտ 90000 զինվոր,
այդ թվում՝ 12000 ենիչերիներ,
300 հրանոթ

Հրամանատար՝ Կարա Մուստաֆա

Վիեննայի ճակատամարտ տեղի է ունեցել 1683 թվականի սեպտեմբերի 11-ին՝ Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի երկամսյա պաշարումից հետո, Օսմանյան կայսրության և Սրբազան Հռոմեական կայսրության ու նրա դաշնակիցների միջև: Այս ճակատամարտում քրիստոնյաների հաղթանակը վերջնականապես վերջակետ դրեց Օսմանյան կայսրության՝ դեպի Եվրոպա արշավանքներին, իսկ Ավստրիան դարձավ Կենտրոնական Եվրոպայի ամենահզոր տերությունն առաջիկա մի քանի տասնամյակների ընթացքում:

Լայնամասշտաբ ճակատամարտում հաղթեցին Լեհաստանի թագավոր և Լիտվիայի Մեծ իշխան Յան III Սոբեսկու ղեկավարած լեհա-ավստրիա-գերմանական զորքերը: Օսմանյան կայսրության զորքերը ղեկավարում էր Մեհմեդ IV-ի մեծ վեզիր Կարա-Մուստաֆան:
Վիեննայի ճակատամարտը դարձավ շրջադարձային իրադարձություն Կենտրոնական Եվրոպայի պետությունների և Օսմանյան կայսրության միջև ընթացող երեքդարյա պատերազմում: Հետագա 16 տարիներին ավստրիական զորքերը անցան լայնամասշտաբ հարձակման և թուրքերից հետ վերցրեցին Հարավային Հունգարիայի և Տրանսիլվանիայի հսկայական տարածքներ:

Ճակատամարտի նախադրյալներ

Օսմանյան կայսրությունը մշտապես ձգտում էր գրավել Վիեննան: Ռազմավարական նշանակություն ունեցող Վիեննան վերահսկում էր Դանուբ գետը, որը Սև ծովը միացնում էր Արևմտյան Եվրոպային, ինչպես նաև Արևմտյան Միջերկրականից դեպի Գերմանիա ձգվող առևտրային ճանապարհները:

Բացի այդ, Օսմանյան կայսրությունը ռազմական օգնություն էր ցուցաբերում հունգարներին և ոչ կաթոլիկ կրոնական փոքրամասնություններին, ովքեր բնակվում էին Հունգարիայի՝ Ավստրիայի կողմից գրավված հատվածում: Այդ երկրում երկար ժամանակահատվածում կաթոլիկ հակառեֆորմացիայի մոլի կողմնակից, Ավստրիայի կայսր Լեոպոլդ I Հաբսբուրգի հակաբողոքականության քաղաքականության հետևանքով ձևավորվում էր դժգոհություն: Արդյունքում այդ դժգոհությունը ծնեց բացահայտ ապստամբություն, և 1681 թվականին բողոքականներն ու Հաբսբուրգների այլ հակառակորդներ միացան թուրքերին: Թուրքերը ճանաչեցին ապստամբած հունգարների առաջնորդ Իմրե Տյոկյոլին որպես Վերին Հունգարիայի[Ն 3] թագավոր: Նրանք այդ տարածքները ետ էին վերցրել Հաբսբուրգներից: Թուրքերը ապստամբներին նույնիսկ խոստացել էին ստեղծել հատուկ նրանց համար «Վիեննական թագավորություն», եթե նրանք օգնեն գրավել քաղաքը:

1681-1682 թվականներին կտրուկ ավելացան Իմրե Տյոկյոլի ուժերի և ավստրիական կառավարական զորքերի միջև ընդհարումները: Վերջինները ներխուժեցին Հունգարիայի կենտրոնական հատված, ինչն էլ պատերազմի պատճառ

հանդիսացավ: Մեծ վեզիր Կարա Մուստաֆա փաշան կարողացավ համոզել Մեհմեդ IV սուլթանին թույլատրել Ավստրիայի դեպ արշավանք իրականացնել: Սուլթանը հրամայեց վեզիրին մտնել Հունգարիայի հյուսիս-արևելյան հատված և պաշարել Դյոր և Կոմարնա ամրոցները: 1682 թվականի հունվարին սկսվեց թուրքական զորքերի մոբիլիզացիա, իսկ նույն թվականի օգոստոսի 6-ին Օսմանյան կայսրությունը պատերազմ հայտարարեց Ավստրիային:

Այդ ժամանակներում մատակարարման հնարավորությունները ցանկացած լայնամասշտաբ առաջխաղացում դարձնում էին ռիսկային: Այդ դեպքում ընդամենը երեք ամիս հետո թուրքական զորքը ստիպված էր լինելու ձմեռել իր երկրից բավականին հեռու՝ թշնամու տարածքում: Այդ իսկ պատճառով մոբիլիզացիայի սկսվելու մինչև գրոհն ընկած 15 ամիսների ընթացքում ավստրիացիները ակտիվորեն պատրաստվում էին պատերազմի: Նրանք Կենտրոնական Եվրոպայի այլ պետությունների հետ դաշինքներ կնքեցին, ինչը վճռորոշ դեր կատարեց թուրքերին պարտության մատնելու գործընթացում: Հենց այդ ձմեռ Լեոպոլդ I կայսրը դաշինք կնքեց Լեհաստանի հետ: Նա պարտավորվեց օգնել լեհերին, եթե թուրքերը պաշարեն Կրակովը, իսկ լեհերն իրենց հերթին պարտավորվեցին օգնել Ավստրիային, եթե թուրքերը պաշարեն Վիեննան:

1683 թվականի մարտի 31-ին Հաբսբուրգների կայսերական պալատ է հասնում պատերազմ հայտարարելու նոտան: Այն ուղարկել էր Կարա Մուստաֆա փաշան Մեհմեդ IV սուլթանի անունից: Հաջորդ օրը թուրքական բանակը Էդիրնե դուրս է գալիս և մեկնում զավթողական արշավանքի: Մայիսի սկզբին թուրքական զորքերը ժամանեցին Բելգրադ, իսկ այնուհետև շարժվեցին դեպի Վիեննա: Հուլիսի 7-ին 40.000 ղրիմյան թաթարներ ավստրիական մայրաքաղաքից դեպի արևելք 40 կմ հեռավորության վրա ճամբար են տեղադրում: Այդ շրջանում ավստրիացիները թվաքանակով երկու անգամ քիչ էին: Առաջին ընդհարումներից հետո Լեոպոլդ I կայսրը 80.000 փախստականների հետ միասին նահանջում դեպի Լինց:

Լեհաստանի թագավորը, որպես օգնություն, 1683 թվականի ամռանը ժամանում է Վիեննա՝ այդպիսով ցուցադրելով իր պարտավորությունները կատարելու պատրաստակամությունը: Հանուն այդ քայլի, նա նույնիսկ իր երկիրը թողեց անպաշտպան: Որպեսզի իր բացակայության ընթացքում Լեհաստանը հեռու պահի օտարների ներխուժումներից, թագավորը նույնիսկ Իմրե

Տյոկյոլին սպառնաց մինչև վերջ ոչնչացնել նրա հողերը, եթե վերջինս հարձակվի լեհական տարածքների վրա:

Վիեննայի պաշարում

Թուրքերի հիմնական ուժերը Վիեննայի մոտ ժամանեցին հուլիսի 14-ին: Նույն օրը Կարա Մուստաֆան քաղաք է ուղարկում այն հանձնելու վերջնագիր:
Կոմս Էռնստ Ռյուդիգեր ֆոն Շտարեմբերգը, ով իր հրամանատարության ներքո ուներ 11.000 զինվոր, 5.000 կամավորական 370 հրանոթ, կտրականապես հրաժարվեց կապիտուլացիայի ենթարկվել: Այդ պահից մի քանի օր առաջ նա տեղեկություն էր ստացել էր Վիեննայի հարավ տեղակայված Պերխտոլդսդորֆ քաղաքում տեղի ունեցած դաժան կոտորածի մասին: Այդ քաղաքի իշխանությունները քաղաքը հանձնելու որոշում էին ընդունել, սակայն թուրքերը վերցնելով այն՝ կոտորած էին կազմակերպել:

Վիեննայի բնակիչները քաղաքի պարիսպներից դուրս գտնվող տները քանդել էին, որպեսզի պաշարողներին թողնեն առանց պաշտպանիչ շինությունների: Այդ քայլը հնարավորություն տվեց ավստրիացիներին թուրքերի վրա ուղղել սարսափեցնող կրակ, եթե վերջինները հարձակվեին: Դրան ի պատասխան Կարա Մուստաֆան իր զինվորներին կրակից պաշտպանելու նպատակով հրամայեց քաղաքի ուղղությամբ փորել երկար խրամատներ:

Թուրքական ծանր հեծելազորը Վիեննական ճակատամարտի ժամանակ

Չնայած որ թուրքերն ունեին 300 հրանոթից բաղկացած գերազանց հրետանի՝ Վիեննայի պարիսպները, որոնք կառուցվել էին տվյալ ժամանակահատվածի պաշտպանական կառույցների վերջին լուծումներով, բավականին ամուր գտնվեցին: Այդ իսկ պատճառով թուրքերը ստիպված էին դիմել քաղաքային վիթխարի պարիսպների ականապատման:
Թուրքական հրամանատարությունն ուներ քաղաքը գրավելու երկու տարբերակ՝ կա՛մ ամբողջ ուժերով ներխուժել ամրոց (ինչը շատ հնարավոր է, որ հանգեցներ թուրքերի հաղթանակի, քանի որ նրանց թվաքանակը 20 անգամ մեծ էր քաղաքի պաշտպանների թվաքանակից), կա՛մ պաշարել քաղաքը: Թուրքերը ընտրեցին երկրորդ տարբերակը:

Թվում է, թե թուրքերը անտրամաբանական գործեցին, սակայն լավ ամրացված քաղաքի գրոհը կարող էր շատ թանկ նստեր թուրքերի վրա մեծաթիվ կորուստներ ունենալու իմաստով: Պաշարումը նվազագույն կորուստներով քաղաքը վերցնելու հրաշալի տարբերակ էր, և թուրքերի մոտ այդ նպատակը գրեթե իրականացավ: Միակ հանգամանքը, որ նրանք հաշվի չէին առել, դա ժամանակն էր: Վիեննայի գրավման նրանց գործողությունների դանդաղկոտությունը և դեպի Ավստրիայի խորքը անշտապ շարժվող զորքերի տեղաշարժերը հանգեցրեցին այն բանին, որ քրիստոնեաների հիմնական ուժերը հասան Վիեննա ժամանակին:

Թուրքերը փակել էին քաղաքին սննդամթերք մատակարարելու բոլոր ուղիները, որի հետևանքով Վիեննայի կայազորն ու բնակիչները հայտնվել էին անելանելի իրավիճակում: Սովածությունն ու հոգնածությունը դարձան այնքան սուր խնդիրներ, որ կոմս ֆոն Շտարեմբերգը հրամայեց մահապատժի ենթարկել յուրաքանչյուրին, ով կքնի պահակակետում: Օգոստոսի վերջին պաշարյալների ուժերը գրեթե ամբողջությամբ սպառվել էին, բայց հենց այդ ժամանակ Լոտարինյան դուքս Կառլ V-ը Վիեննայից դեպի հյուսիս-արևելք 5 կմ հեռավորության վրա գտնվող Բիզամբերգի մոտ ջախջախեց Իմրե Տյոկյոլին:

Սեպտեմբերի 6-ին լեհական բանակը Վիեննայից դեպի հյուսիս-արևմուտք 30 կմ հեռավորության վրա գտնվող Տուլն քաղաքի մոտ անցավ Դանուբ գետը և միացավ Սրբազան լիգայի մնացյալ զորքին, որի գործողություններն արդեն օրինել էր Հռոմի պապ Ինոկենտիոս XI-ը: Միայն Հաբսբուրգների հակառակորդ Լյուդովիկ XIV-ը ոչ միայն հրաժարվեց օգնել դաշնակիցներին, այլև օգտվելով ստեղծված իրավիճակից, հարձակվեց Հարավային Գերմանիայի վրա:

Սեպտեմբերի սկզբին թուրքական 5.000 հմուտ ականապատողներ մեկը մյուսի հետևից պայթեցրեցին քաղաքային պարսպի նշանակալի հատվածներ՝ Բուրգսկյան բաստիոնը, Լյոբելսկյան բաստիոնը և Բուրգսկյան պարսպի ետևի պաշտպանիչ հատվածները: Արդյունքում առաջացան 12 մետր լայնությամբ բացվածքներ: Ավստրիացիներն իրենց հերթին փորձում էին թունելներ փորել, որպեսզի խանգարեն թուրքական ականապատողներին: Սակայն սեպտեմբերի 8-ին թուրքերն այնուամենայնիվ գրավեցին Բորգսկյան ետնապարիսպը: Եվ այնուհետև, պաշարյալները սկսեցին պատրաստվել հենց քաղաքի ներսում մարտական գործողություններ վարելուն:

Հակամարտող կողմերի ուժեր

Օսմանյան կայսրության թվաքանակը կազմում էր մոտավորապես 200.000 մարդ: Անմիջապես պաշարմամբ զբաղվում էին 18.000 ենիչերիներ, ևս 70.000 թուրքական զինվորներ հետևում էին շրջակա տարածքին:
Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ սեպտեմբերի 11-ին, երբ Լեհաստանի թագավոր և Լիտվիայի Մեծ իշխան Յան III Սոբեսկու հրամանատարությամբ Վիեննային մոտեցան Սրբազան լիգայի միացյալ ուժերը:

•26.000 նրա անմիջական զորքերի զինվոր՝ թևավոր գուսարների 25 մարտկոց, զրահապատների 77 մարտկոց pot, թեթև հեծելազորի, հետևակի, դրագունների 31 մարտկոց, 28 հրանոթ և 250 հրետանավոր[5],
•18.400 ավստրիացիներ (որոնցից 8100-ը հեծելազոր), 70 հրանոթ Կառլ Vի հրամանատարությամբ,
•20.000 բավարական, ֆրանկոնյան և շվաբյան զինվոր 38 հրանոթով Գեորգ Վալդեացու հրմանատարությամբմ
•9.000 սաքսոնացիներ (որոնցից 7000-ը հեևակային էին) 16 հրանոթով Սաքսոնիայի կյուրֆյուրստ Յոհան Գեորգ III-ի հրամանատարությամբ,
•3.700 զոպորոժյան կոզակներ:

Ընդհանուր 84450մարդ (որոնցից 3000-ը պահպանում էին դմբկահարներին և պատերազմին չեն մասնակցել:

Ճակատամարտի նախաշեմին

Դաշնակից քրիստոնեական ուժերը ստիպված էին գործել արագ: Պետք է փրկել քաղաքը թուրքերից, հակառակ դեպքում դաշնակիցները ստիպված էին իրենց սկսել պաշարել գրավյալ Վիեննան: Չնայած դաշնակից ուժերի ազգային բազմազանության և զորքերի տարբերությունների՝ դաշնակիցներին հաջողվեց ընդամենը վեց շաբաթում ստեղծել զորքերի ղեկավարման մարմին: Զորքի առանցքը դարձավ Լեհաստանի թագավորի հրամանատարությամբ գործող լեհական ծանր հեծելազորը: Զինվորների մարտական ոգին բարձր էր, քանի որ նրանք գնում էին պատերազմի ոչ թե իրենց թագավորների շահերի համար, այլ հանուն քրիստոնեական հավատքի: Նաև էական դեր խաղաց այն, որ ի տարբերություն խաչակրաց արշավանքների, պատերազմը ընթանում էր հենց

Եվրոպայի սրտում:

Կարա Մուստաֆան իր ենթակայության ներքո ունենալով իրտրամադրության տակ բավարար ժամանակ, դաշնակից ուժերին դիմակայելու անհրաժեշտ հնարավորություններ, զինվորների բարձր մարտական ոգի, չկարողացավ ինչպես հարկն է օգտվել այդպիսի հնարավորությունից: Նա թիկունքի պաշտպանությունը վստահեց ղրիմյան խանին ու նրա հեծելազորին, որը կազմված էր 30-40 հազար հեծյալից:

Խանը թուրքական գերագույն հրամանատարի կողմից իրեն նվաստացած և վիրավորված էր զգում, այդ իսկ պատճառով հրաժարվեց իրենց մոտով դեպի լեռներ ընթացող լեհական զորքերին: Հարկ է նշել նաև, որ բացի թաթարները չէլի ուժեր կային, որոնք չէին ենթարկվում Կարա Մուստաֆային:

Թաթարներից բացի թուրքերը չէին կարող հույս դնել նաև մոլդովացիների ու վալախների վրա, որոնք Օսմանյան կայսրությունը չսիրելու հիմնավոր պատճառներ ունեին: Թուրքերը ոչ միայն Մոլդովիան ու Վալախիան դրել էին ծանր հարկի տակ, այլ նաև մշտապես խառնվում էին նրանց ներքին գործերին՝ գահընկեց անելով նրանց տեղական առաջնորդներին և նշանակելով իր խամաճիկներին: Երբ Մոլդովայի և Վալախիայի իշխանները տեղեկացան սուլթանի նվաճողական արշավանքների մասին, նրանք փորձեցին այդ մասին զգուշացնել Հաբսբուրգներին: Նրանք նաև փորձում էին պատերազմին մասնակցելուց խուսափել, սակայն թուրքերը ստիպեցին նրանց: Առկա են բազմաթիվ առասպելներ այն մասին, որ մոլդովացի և վալախացի հրետանավորները իրենց հրանոթները լիցքավորել են ծղոտով ու այդպես կրակել պաշարված Վիեննայի ուղղությամբ:

Այդ բոլոր հակասությունների պատճառով դաշնակցային բանակը կարողացել է մոտենալ Վիեննային: Լոտարինյան դուքս Կառլ V-ը գերմանական տարածքներից հավաքեց զորք, որը նաև համալրվեց և ուժեղացավ Սոբեսկիի բանակի ժամանումով: Վիեննայի պաշարման վեցերորդ շաբաթն էր ընթանում, երբ դաշնակցային բանակը ժամանեց Դանուբի հյուսիսային ափ: Սրբազան լիգայի զորքերը ժամանեցին Կալենբերգ (Ճաղատ լեռ), որը լեռներում իշխող դիրք ուներ: Նրանք պաշարյալներին տեղեկացրեցին իրենց ժամանման մասին ազդանշանային հրթիռների միջոցով: Դաշնակիցները ռազմական խորհրդում որոշեցին բարձրանալ Դանուբի հոսանքն ի վեր 30 կմ և անցնելով գետը՝ Վիեննական անտառների կողմից մոտենալ քաղաքին:

Սեպտեմբերի 12-ի վաղ առավոտյան՝ բուն ճակատամարտից առաջ, լեհական թագավորի ու նրա կնոջ պատվին իրականացվում է ժամերգություն:

Ճակատամարտը

Վիեննական ճակատամարտ, հեղինակ՝ Յոզեֆ Բրանդտա
Ճակատամարտը սկսվեց այն բանից հետո, երբ քրիստոնեաների բոլոր ուժերը տեղաբաշխվեցին: Առավոտյան ժամը 4-ին թուրքերը հարձակվեցին, որպեսզի դաշնակիցներին խոչընդոտեն իրենց ուժերը լավ դասավորել: Կառլ Լոթարիացին և ավստրիական զորքերը ձախ թևում ձեռնարկեցին հակագրոհ, իսկ գերմանացիները գրոհեցին թուրքերի կենտրոնը:

Այդ ժամանակ Կարա Մուստաֆան իր հերթին հակագրոհ ձեռնարկեց՝ թուրքական ենիչերների մի մասը թողնելով քաղաքի գրոհի համար: Նա ցանկանում էր գրավել Վիեննան նախքան Սոբիսկու ժամանումը, սակայն արդեն ուշ էր: Թուրքական ականապատողները արդեն վերջացրել էին քաղաքային պարիսպների պայթեցման նպատակով պայթուցիչների տեղադրում, սակայն պայթյունի ուժգնությունը մեծացնելու նպատակով տեղադրված ռումբերը դեռևս ծածկում էին հողով և ավազով: Ավստրիացները կարողացան փորել հակառակ կողմից թունել և ժամանակին չեզոքացնել ականները:

Մինչ թուրքական և ավստրիական ականապատողներն ու ականազերծողները պայքարում էին արագության գործոնով, վերևում ընթանում էր կատաղի ճակատամարտ: Լեհական հեծելազորը հոըժկու հարված հասցրեց թուրքերի աջ թևին: Վերջիններս շեշտը դրել էին ոչ թե դաշնակցային զորքերի ջախջախման վրա, այլ քաղաքի շուտափույթ գրավման: Այդ սխալն էլ հենց նրանց ձախողեց:

12 ժամյա ճակատամարտից հետո լեհերը շարունակում էին ամուր դիրքավորվել աջ թևում: Քրիստոնեական հեծելազորը ամբողջ օրը կանգնած էր բլուրների վրա՝ հետևելով ճակատամարտին, որում հիմնականում դեռևս մասնակցում էր հետևակը: Մոտավորապես ժամը 17-ին չորս մասին բաժանված հեծելազորը անցավ հարձակման: Այդ չորս մասերից մեկը կազմված էր ավստրո-գերմանական հեծյալներից, իսկ մնացած երեքը՝ լեհերից ու Լիտվիայի Մեծ իշխանության քաղաքացիներից: 20.000 հեծյալից կազմված հեծելազորը (պատմության ամենախոշոր հեծելազորային գրոհներից մեկն է)

Յան Սոբիսկու անմիջական հրամանատարությամբ իջնում է բլուրներից և ճեղքում թուրքերի շարքերը, որոնք առանց այդ էլ ամբողջ օրը հոգնելուց հետո բաժանվել էին երկու մասի: Քրիստոնեական հեծյալները հարվածեցին ուղիղ թուրքական ճամբարին: Այդ պահին Վիեննայի կայազորը դուրս եկավ քաղաքից և միացավ հակագրոհին:

Օսմանյան զորքերը ոչ միայն ֆիզիկապես հյուծված էին, այլև նրանց մարտական ոգին ընկել էր այն բանից հետո, երբ Վիեննայի պարիսպները պայթեցնելու փորձը ձախողվեց, և իրենք չկարողացան ներխուժել քաղաք: Հեծելազորի հարձակումը նրանց ստիպեց նահանջել դեպի հարավ և արևելք: Հեծելազորի հարձակումից առնվազն երեք ժամ անց քրիստոնեաները հասան լիակատար հաղթանակի և փրկեցին Վիեննան:

Ճակատամարտից հետո Յան Սոբեսկին վերաձևակերպեց Կեսարի արտահայտած «Veni, vidi, vici» (թարգմանաբար՝ «Եկա, տեսա, հաղթեցի») արտահայտությունը՝ ասելով «Venimus, Vidimus, Deus vicit», այսինքն՝ «Մենք եկանք, մենք տեսանք, Աստված հաղթեց»:

Ճակատամարտի հետևանքները

Թուրքերը կորուստները կազմում էին շուրջ 15.000 սպանված և վիրավոր և ավելի քան 5.000 մուսուլման գերի ընկավ: Բացի այդ, դաշնակիցները վերցրեցին նաև օսմանյան բոլոր հրանոթները: Դաշնակիցները կորուստները կազմեցին 4.5 հազար մարդ: Չնայած թուրքերը շտապ կարգով նահանջեցին, այնուամենայնիվ նրանք հասցրին սպանել ավստրիացի բոլոր գերիներին՝ բացառությամբ մի քանի ազնվականի, որոնց թողեցին այն հաշվարկով, որ նրանց դիմաց փրկագին կստանան:

Քրիստոնեաների ձեռքում հայտնված ավարը հսկայական էր: Մի քանի շաբաթ անց Յան Սոբեսկին իր կնոջն ուղղված նամակում գրում է՝
«Մենք գրավեցին չլսված քանակությամբ հարստությո... վրաններ, ոչխարներ, կովեր և մեծ քանակությամբ ուխտեր... այդ պատերազմում, որին հավասարը չի եղել, թշնամին պարտվեց և կորցրեց ամեն ինչ: Նրանց մնում էր միայն փախչել՝ փրկելով սեփական կյանքը... Հրամանատար Շտարբերգը գրկեց և համբուրեց ինձ և կոչեց ինձ իր փրկիչ»:

Այս բուռն զգացմունքային խոսքը չխանգարեցին

Շտարեմբերգին հրամայել անմիջապես վերադարձնել Վիեննայի վնասված պարիսպները, որպեսզի պատրաստ լինեն թուրքական հնարավոր հակահարձակմանը: Այնուամենայնիվ հարձակում այդպես էլ չեղավ: Վիեննայի ճակատամարտի հաղթանակը Հունգարիայի և Բալկանյան մի քանի երկրների նվաճման սկիզբ հանդիսացավ:

1699 թվականի Ավստրիան Օսմանյան կայսրության հետ կնքեց թագավորական խաղաղության պայմանագիր: Դրանից առաջ թուրքերը հաշվեհարդար տեսան խայտառակ պարտություն կրած Կարա Մուստաֆայի հետ: 1683 թվականի դեկտեմբերի 25-ին ենիչերների հրամանատարի կարգադրությամբ Բելգրադում մահապատժի ենթարկեցին Կարա Մուստաֆային: Նրան վերջույթներից կապել էին մետաքսյա պարաններ, որոնցից յուրաքանչյուրը ձգում էին մի քանի մարդ:

Հայերի մասնակցությունը ճակատամարտին

Վիեննայի ճակատամարտին հայերի մասնակցության մասին հայտնում է լեհահայ Սադոկ Բարոնչը, որը, խոսելով ճակատամարտին մասին, հայտնում է, որ. «Այդ գործին միացան 5.000 ալեբարդակիր հայեր և ըստ երևույթին դա վերջին անգամ էր, որ նրանք հավաքվում էին այդքան մեծ քանակությամբ»՝ այս խոսքերը հաստատելով «79-րդ» հղումով: Հիշատակված հղումի տողատակում համապատասխանող տեղում էլ գրված է, որ այս տեղեկությունը նա վերցրել է մի անանուն հեղինակի նամակից, ուղղված ինչ որ մեկին Սիլեզիայում և թվագրված է՝ 1683 թվականի օգոստոսի 27-ով: Այդ նամակում ասվում է. «Այնտեղ էին նաև 5.000 հայեր, որոնք առանձնանում էին: Նրանք երկար, կարմիր գլխարկներ և թևնոցներ, ինչպես նաև երկար տաբատներ ունեին, կարծես վոլխովներ լինեին, իսկ զենքերից էլ նրանք կրում էին մուշկետներ և տապարներ: Նրանք նաև վրան խաչն ու իրենց զինանշանը պատկերող դրոշներ ունեին»:

Ճակատամարտի պատմական նշանակությունը

Չնայած այն ժամանակ դեռևս ոչ ոք չէր կանխատեսում, բայց Վիեննայի ճակատամարտը վճռեց ամբողջ պատերազմի ելքը: Հետագա 16 տարիների ընթացքում թուրքերը անօգուտ կռվում էին՝ կորցնելով Հունգարիան և Տրանսիլվանիան, մինչև որ վերջնականապես չընթունեցին սեփական պարտությունը: Պատերազմի ավարտը հաստատվեց Թագավորական խաղաղության համաձայնագրով:

Լյուդովիկոս XIV-ի վարած քաղաքականությունը կանխորոշեց առաջիկա մի քանի հարյուր տարվա պատմության ընթացքը. գերմանախոս երկրները ստիպված էին պատերազմել և՛ Արևմտյան, և՛ Արևելյան ճակատներում: Մինչ գերմանական զորքերը կռվում էին Սրբազան լիգայի կազմում, Լյուդովիկը օգտվեց այդ առիթից և գրավեց Լյուքսեմբուրգը, Էլզասը և Ստրասբուրգը, Գերմանիայի հարավում ոչնչացրեց հսկայական տարածքներ: Իսկ Ավստրիան չկարողացավ որևէ օգնություն ցույց տալ գերմանացիներին Ֆրանսիայի դեմ պատերազմում, քանի դեռ ընթանում էր թուրքերի հետ պատերազմը:

1906 թվականին Վիեննայի հյուսիսում՝ Կալենբուրգ բլրի գագաթին, ավստրիացիները Յան Սոբեսկու պատվին կառուցեցին Սուրբ Իոսիֆի եկեղեցի: Վիեննա - Վարշավա երկաթուղային գիծը նույնպես անվանվեց Յան Սոբիսկու պատվին: Սոբեսկու վահան համաստեղությունը նույնպես անվանվել է նրա պատվին:

Պատերազմից հետո լեհ-ավստրիական բարեկամությունը երկար չտևեց, քանի որ Կառլ V Լոթարինգցին սկսեց թերագնահատել պատերազմում Յան III Սոբիսկու և նրա լեհական զորքերի դերը: Ոչ Սոբեսկին և էլ Ռեչ Պոսպոլիտան Ավստրիայի փրկությունից ոչինչ չշահեցին: Ընդհակառակը, նՎիեննայի ճակատամարտում ավստրիացիների հաղթանակը Ավստրիական կայսրության ստեղծման (1804-1867) և Ռեչ Պոսպոլիտանի անկման հիմք հանդիսացավ: 1772 և 1795 թվականներին Հաբսբուրգները մասնակցեցին Ռեչ Պոսպոլիտայի առաջին և երրորդ բաժանմանը, որի արդյունքում այդ պետությունը անհետացավ Եվրոպայի քաղաքական քարտեզից: Պատկերավոր է Ռուսաստանի կայսեր Նիկոլայ I-ի հետևյալ արտահայտությունը. - «Լեհական թագավորներից ամենահիմարը եղել է Յան Սոբիսկին, իսկ ռուսական կայսրերից ամենահիմարը եղել եմ ես: Սոբիսկին այն բանի համար, որ 1683 թվականի փրկեց Ավստրիան, իսկ ես այն բանի համար, որ փրկեցի այն 1848 թվականին»: Նա նկատի ուներ այն, որ Ղրիմի պատերազմում Ռուսաստանը պարտվեց առաջին հերթին Ավստրիայի ուխտադրժության պատճառով. Ռուսաստանը իր զորքերի կեսը ստիպված էր պահել Ավստրիայի հետ սահմանին, որպեսզի խուսափի թիկունքից հարվածից:

Ճակատամարտի կրոնական նշանակություն

Մուսուլմանների հանդեպ տարած հաղթանակի հիշատակի պատվին Հռոմի պապ Ինոկենտիոս XI-ը հաստատեց կաթոլիկ եկեղեցու տարածքում Չենստոխովսկյան Աստվածածնի սրբապատկերի տոնի նշումը: Հռոմի Կաթոլիկ եկեղեցու տոնացույցում այդ տոնը նշվում է սեպտեմբերի 12-ին:
1711 թվականին Վիեննայի Սուրբ Ստեփանոսի մայր տաճարի համար ճակատամարտի ժամանակ գրավված զենքերից ձուլվել է զանգ:

Ճակատամարտի արտացոլումը մշակույթում

Առասպելի համաձայն՝ հենց Վիեննայի ճակատամարտից հետո են սկսել քաղաքում սուրճ խմել: Հայտնի է, որ Վիեննայի առաջին սրճարանները բացվել են հայ առևտրականների կողմից: Առաջին սրճարանը 1685 թվականի հունվարի 17-ին գործարկել է Յոհաննես Դիոդատոն (իրական անունը՝ Հովհաննես Աստվածատուր), հաջորդը 1697 թվականի մարտի 23-ին բացել է ծնունդով երևանցի Իսահակ դե Լուկան (իրական անունը՝ Սահակ Ղուկասյան): Հենց նա է եղել նաև «Երկնագույն տափաշշի ներքո» մեկ այլ վիեննական սրճարանի սեփականատերը, որը բացվել է 1703 թվականին:

Ճակատամարտի արտացոլումը երաժշտությունում

•Ավստրիացի կոմպոզիտոր Յոհան Յոզեֆ Ֆուքսը Վիեննայի ճակատամարտը անմահացրել է իր Turcaria պարտիտում, որն ունի «1863 թվականին թուրքերի կողմից Վիեննայի պաշարման երաժշտական նկար» ենթաբաժին:
•Վիեննայի ճակատամարտի և ավստրիական կողմի հաղթանակի ապահովման գործում թևավոր գուսարների ներդրմանն է նվիրված «Սաբատոն» երաժշտական խմբի «The Last Stand» ալբոմի «Winged Hussars» երգը:

Ճակատամարտի արտացոլումը կինոմատոգրաֆիայում

•«Սեպտեմբերի տասնմեկ 1683» - գեղարվեստական ֆիլմ, ռեժիսիոր Ռենցո Մարտինելի (Իտալիա, Լեհաստան, 2012թ.)

Վիեննայի ճակատամարտի մասին պատմող ֆիլմը զայրացրել է թուրքերին

Ֆիլմի դեմ թուրքական մամուլում հնչել են քննադատություններ: «1638թ. սեպտեմբեր 11»-ը պատմում է այն մասին, թե ինչպես են օսմանյան բանակները հասնում մինչև Վիեննա, սակայն համաեվրոպական ուժերին հաջողվում է վերջին պահին թուրքերին պարտության մատնել և վերացնել Եվրոպան գրավելու թուրքական վտանգը: Ֆիլմը պատմում է նաև ճակատամարտում մեծ դեր խաղացած կաթոլիկ քահանա Մարկո դե Ավիանոյի կյանքը:
«1638թ. սեպտեմբեր 11» ֆիլմի ռեժիսոր Ռենցո Մարտինելին ասել է, որ եթե թուրքերը հաղթանակ տանեին, համաշխարհային պատմության ընթացքը կփոխվեր: Նա նաև հերքել է տեղեկությունն այն մասին, թե ֆիլմը հակաիսլամական է: Haberturk-ի հաղորդման համաձայն՝ մի շարք թուրք դերասաններ մերժել են ֆիլմում նկարահանվելու առաջարկը:

Լեհահայ պատմաբան Սադոկ Բարոնչ

լեհ.՝ Sadok Barącz

Սադոկ Բարոնչը ծնվել է 1814 թվականի ապրիլի 24-ին Ստանիսլավ քաղաքում (ներկայում՝ Իվանո-Ֆրանկովսկ): 1831-1833 թվականներին սովորել է Լվովի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում: 1835 թվականին դարձել է դոմինիկյան միաբանության անդամ և ընդունել անունը: Պաշտոնավարել է նույն օրդենի վանքերում, եղել է աստվածաբանության պրոֆեսոր Լվովում: 1855 թվականին մշտապես հաստատվել է Լվովի մոտ՝ Պոդկամենե վանքում: Հրապարակել է մոտ 30 գիրք և բազմաթիվ հոդվածներ: Կարևոր աշխատություններից են «Լեհաստանի նշանավոր հայերի կենսագրությունը» (1856) և «Հայոց պատմության ակնարկ»-ը (1869): Առաջինը բառարանի ձևով պարունակում է 300 նշանավոր լեհահայերի կենսագրությունները, երկրորդը՝ Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի 40 հայկական գաղթավայրերի համառոտ պատմությունը[1]: Արժեքավոր են նաև Սադոկ Բարոնչի հետազոտությունները՝ նվիրված Լեհաստանի և Ուկրաինայի մի շարք քաղաքների պատմությանը:

Գրականություն

1. Bruce, George (1981). Harbottle's Dictionary of Battles. Van Nostrand Reinhold. ISBN 0-246-11103-8(անգլ.)
2. Stoye, John (2007). The Siege of Vienna: The Last Great Trial between Cross & Crescent. Pegasus Books. s. 175.(անգլ.)
3. Top 10 Most Important Battles in History.(անգլ.)
4. Tucker, Spencer C. (2011). Battles That Changed History: An Encyclopedia of World Conflict. ABC-CLIO. s. 216. ISBN 978-1-59884-429-0.(անգլ.)
5. Павел Кузнецов. Лев Лехистана против Чёрного Мустафы // Вокруг света, 2008.(ռուս.)
6. Е. П. Карнович. Очерки и рассказы из старинного быта Польши. Ян Собеский под Веною.(ռուս.)
7. «Rys dziejów ormiańskich», Barącz S., Tarnopol, 1869. («Հայոց պատմության ուրվագծեր», Բարոնչ Ս., (լեհերեն), Տեռնոպոլ, 1869.)
8. «Zbieracz literacki Kraków», 1838 T. IV. str. 94 (Կրակովի գրական հավաքածու, 4-րդ հատոր, 94-րդ էջ.)
9. Witold Gostyński. Wiedeń — przewodnik. — Варшава : Wydawnictwo Sport i turystyka, 1985.(լեհ.)
10. Rudolf Vierhaus Kraatz - Menge. Том 6, 2006, стр. 576
11. Iveta Kasalová Kaffeehauskultur in Wien – im Wandel Вена, 2012, стр. 17(գերմ.)
12. «Թաքնված Հայաստան: Պասկալ և Դիոդատո | Hidden Armenia: Pascal & Diodato.»: Արխիվացված է օրիգինալից 2017-06-21-ին: Վերցված է 2017-11-17
13. Rudolf Vierhaus Kraatz - Menge. Том 6, 2006, стр. 576.(գերմ.)
14. Iveta Kasalová Kaffeehauskultur in Wien – im Wandel Вена, 2012, p. 17.(գերմ.)
15. Peter Noever, Global Lab, Distributed Art Pub Incorporated, 2009, p. 9.(գերմ.)
16. Éva R. Bajkay, Zeit des Aufbruchs: Budapest und Wien zwischen Historismus und Avantgarde : eine Ausstellung des Kunsthistorischen Museums Wien in Zusammenarbeit mit dem Collegium Hungaricum, Kunsthistorisches Museum, 2003, p. 226.(գերմ.)
17. Paul Hofmann, The Viennese: Splendor, Twilight, and Exile, Doubleday, 1989, стр. 62.(գերմ.)
18. Lillian Schacherl, Vienna, Prestel, 1993, p. 20.(գերմ.)
19. Ina Baghdiantz McCabe, Orientalism in Early Modern France: Eurasian Trade, Exoticism, and the Ancien Régime, Berg, 2008, p. 195—196.(գերմ.)
20. Harold B. Segel, The Vienna Coffeehouse Wits, 1890-1938, Purdue University Press, 1993, p. 8.(գերմ.)
21. Johannes Ebert, Knut Görich, Die große Chronik Weltgeschichte: Absolutismus, Aufklärung und Revolution : 1648 - 1793, Wissenmedia Verlag, 2008, p. 103.(գերմ.)
22. Mark Pendergrast, Uncommon Grounds: The History of Coffee and How It Transformed Our World, Basic Books, 2010, p. 10.(անգլ.)
23. Brigitte Beier, Neue Chronik der Weltgeschichte, Wissenmedia Verlag, 2007, p. 425.(գերմ.)
24. Mădălina Diaconu, Sensorisches Labor Wien: urbane Haptik- und Geruchsforschung, LIT Verlag Münster, 2011, p. 180.(գերմ.)
25. Peter Csendes, Ferdinand Opll, Karl Vocelka, Wien: Die frühneuzeitliche Residenz (16. bis 18. Jahrhundert), Böhlau Verlag Wien, 2003, p. 442.(գերմ.)
26. Hans Jürgen Teuteberg, Die Revolution am Esstisch: neue Studien zur Nahrungskultur im 19.-20. Jahrhundert, Franz Steiner Verlag, 2004, p. 180.(գերմ.)
27. Ursula M. Becker, Kaffee-Konzentration: zur Entwicklung und Organisation des hanseatischen Kaffehandels, Franz Steiner Verlag, 2002, p. 37.(գերմ.)
28. «Fux — Alla turca»: Վերցված է 2016-08-21(անգլ.)

Travels and Chronicles of Simeon of Poland: Perspectives of Further Research

Košťálová Petra
University of Prague

Simeon, the son of Martiros, also known as Simeon Lehatsi (meaning from Poland or, in Otoman Turkish, from Lehastan) is one of the prominent figures of the Armenian literature of 16th-17th centuries. He originated from Armenian diaspora (*Lehahayer*) settled in the territory of Poland-Lithuania from the Middle Ages, being probably a result of a big migration wave from the Armenian motherland (Bagratid Ani) during 11th century. The history of Armenian well orga-nised communities, numbering several tens of thousands of people in today's Poland, Moldavia, Romania, Bulgaria, Ukraine and Hungary, starts to be writtten especially after Ottoman annexation of Crimea. The pivotal role here was played as usual by Armenian traders and merchants, whose ability to move and trade in multicultural enviroment was undeniable. Armenians were allowed special privileges, granted by Polish kings (Statuta), as tax exemptions and autonomy to orga-nise their communities themselves (in exchange for this, Armenians were auto-matically ranked among direct subjects of kings, as was the case of Jews). Arme-nians managed their own tribunals (*datastan*) with the right of capital punishment and they were obliged to follow their own town council, chaired by *woyt*. Arme-nian quarters were usually located near the town centre – e.g. houses of Arme-nian merchants, dating back to 17th century and decorated with sgraffiti of wine grapes, surrounded the market square in the Polish city of Zamość. Similarly, the Armenian quarter in the city of Lvov, located near the main market square, inclu-ded three streets (one of them is till now called Virmenska) and one small mar-ket. Lvov became (in addition to other cities as Kamenec Podolsk, Suceava etc.) one of the most important city of Polish-Lithuanian region of Galicia (Halych). It was not only duty free city situated on the so-called Moldavean, Walachian or Tatar road (*via tartarica*) and thus opened to traders from Crimea, Russia, Otto-man Empire, Perse etc., but also the siege of Armenian Apostolic Archbishopant the home of several hundred Armenian families. In order to illustrate the situati-on, it could be

helpful to make the mention of importance of Jewish Prague; the analogous role played the city of Lvov with its integrated Armenian community.

Paraphrasing words of Simeon, who is speaking about very rich *khodjas* and *ağas*, Armenian *tanuters*, the influence of Lvov's merchants was even highlighted in the period of religious and cultural revival of 17th century, in Armenian called *zarthonk*. The most influential members of the community were not only busi-nessmen and traders, but also major benefactors and donators of the Armenian Apostolic Church. Armenian merchants were engaged in the wine trade and the carpet trade; they were generally considered as experts in terms of Oriental com-merce and craft (jewelry, spices, weapons, sabers, belts, raw silk and *althembash*, silk clothes interwoven with gold threads, *camelot/shamlat*, soft cloth made from leather of Anatolian goats etc.) Just a brief summary of business articles men-tionned here suggests the close relationship between Armenian merchants from Poland and their co-religionists living in Ottoman Empire, Perse and India. This relationship and the focus on specific «border mentality» is reflected also by means of other typical employment of Armenians in Poland – by their role of official translators (*terciman, tulmach*) of Polish kings and magnats.

The border mentality, mirroring the situation of an isolated and threatened religious community (facing the permanent fear of conversion and assimilation) goes hand in hand with the vocation of Chosen People forced to live in exile (both, external and internal), fostered by the absence of geopolitical stability in Armenian motherland. The Armenian Apostolic Church in Poland finally for-med an union with Roman Catholic Church (1630) – an event without prece-dent, which caused, albeit futile, the intervention of catholikos of all Armenians himself (the impact of Pope and the pressure of Polish nobility should have been prominent in this case). Ecclesiastical disputes between Apostolic and Catholic Church deeply affected Simeon's life, since he belonged to the supporters of Ar-menian Apostolic Church and held «the faith of his ancestors». The conversion to Catholicism, finally completed at the end of 17th century, does not however meant the disappearance of Armenian community in Central and Easten Europe – even though transformated, Armenian diaspora continue his existence till to-day. Some of Armenian monuments in diaspora, as for example the old city of Zamość and Lvov, are placed on UNESCO World Heritage List. Romanian citi-es as Gherla

(Armenierstadt / Armenopolis / Hayaqałaq) and Dumbrăveni (Elisabethstadt) have witnessed strong Armenian presence during 18th century (even though monuments from this period show visible traces of the Baroque style).

The text of Simeon of Poland entitled *Ughegruthyun* (Travels or Travel Ac-counts) represents one of the most important Armenian historical sources of the 17th century. Simeon's work gives the perception of everyday reality in that pe-riod and provides information concerning the situation in Poland and Lithuania, the Ottoman Empire and its vassal states in the Balkans (Moldavia, Valachia), as well as in Eastern Mediterranean and the Black Sea regions. The author as an Apostolic Christian from Polish-Lithuanian Commonwealth (Rzeczpospolita) was interested especially in the conditions of Armenians and other Christians li-ving in cities controlled by the Ottomans and their specific situation in compari-son with the Armenians in Poland. Simeon spent almost ten years traveling through the Ottoman Empire (1608-1618), led by the major idea of pilgrimage to Jerusalem, Rome and the monastery of St. John the Baptist (*surb Karapet*) in Ana-tolian town of Mush (Western Armenia). Simeon presents himself primarily as an pilgrim, *ukhtavor*, bearing his *ukht* or Covenant (sacred pilgrimage or holy obliga-tion between God and his Chosen people). Places touched by God are highly re-vered in Apostolic Church from the very beginning, so it is not surprising that the crowds of pilgrims flowed into Jerusalem starting from 6th century, whether via land route (crossing the Sinai Peninsula from Cairo or from Istanbul-Aleppo-Damas) or by sea, using Venetian and Ottoman galleons.

Simeon's text could be considered as a kind of travel itinerary and diary, ac-companied by (sometimes very detailed) information concerning history, geogra-phy, economics and demography of the places visited, as well as his personal and subjective impressions and feelings. Simeon started his journey in Lvov (south-eastern part of Polish-Lithuania) and than he traveled through the Balkans by so-called Walachian or Tatar road (by the Danube delta to present-day Moldavia, then through Romania and Bulgaria) to Istanbul/Constantinople. His itinerary is characteristic for both pilgrims and merchants, using Tatar road. After eight months of Balkan travels, Simeon finally reached Istanbul and stayed there al-most a year, working for the Apostolic patriarch Grigor Kesaratsi (residing in the quarter of Sulumonastyr/Vlanka) as *dpir* (scribe) and

acolyte. After a few months, he visited the surroundings of the Sea of Marmara, then he traveled to Rome by way of Venice; after his return to Istanbul he started the sacred pilgri-mage to Mush (via Malatya, Sivas/Sebaste, Tokat, Kharberd/Harput, Diyarba-kır/Amid). After that Simeon continued by ukht to Jerusalem (through Cairo and Gaza), finally returning home via Aleppo and Armenian Cilicia (Marash, Zeythun). After his return in the Polish city of Lvov, Simeon continued to work as a scribe, acolyte and teacher in Armenian schools, leaving behind him a manu-script of his Travel Accounts. The text describing his journey is accompanied also by *taregruthyun* (chronicles) and *hishatakaran* (colophons), which were written soon after Simeon's return from the Ottoman Empire.

The text was influenced by the author's personality and his experiences. Unlike his predecessors and contemporaries, for whom writing about the Orient represented an integral part of the life of an educated Renaissance nobleman, Si-meon traveled at its own expense more than 10 years, while his driving force was his own curiosity. Other contemporary travelers from Central Europe (Kryštof Harant, Oldřich Prefát etc.) or from Western Europe (Ogier Busbecq, Jacques de Villamont, Pietro della Valle etc.) left behind them works that might be consi-dered as the works of reference or literary monuments of Western perspective of Orient; Simeon's work as independent of the most of stereotypes of *Frank* world represents less biased image. Author's lamentations over the fate of Armenian population living in Ottoman Empire are frequent; detailed analysis of his text reveals characteristic stereotypes of Greeks, Jews, Turks, Arabs and inhabitants of Italian towns.

Even though Simeon's text contains some common features and characte-ristics typical for the general discourse about the Ottoman Empire, it is definitely not an orientalist vision of the Orient as described later (for the 18th and 19th century) in the work of Edward Saïd. More than simplistic binary opposition bet-ween categories of West and East, «translated» as rationality versus chaos, the Travel Accounts of Simeon offer a contemporary account of Polish Armenia, concerning the situation in the Ottoman Empire - the testimony of an interested person, who spent most of his life living on the immediate border of the «East» and often crossed it. We should not forget the fact that travelers from the Po-lish-Lithuanian Commonwealth were themselves perceived as «others» and «ori-ental» in the eyes of travelers from Western Europe. On the one hand, it was easier for them to

penetrate and look into the oriental world, because they them-selves were part of it; whereas e.g. Galata was for Western travelers just a sort of «tourist showcase».

As the primary source, Simeon's Travel Accounts contain extremely valuab-le references to attacks of jelâlis and to depopulation of Armenian homeland. This rural and ethnic exodus was directed from East to West and its aim were great fortified cities. Numerous migratory waves of *pandukht* from Eastern Ana-tolia (Western Armenia) moved to Constantinople (Simeon speaks about 40 thousands newcomers from Great Armenia, who settled in districts as Vlanka, Sulumonastyr, Üsküdar etc.).

Simeon's text offers the reader the rich mosaic of his immediate travel ex-periences, perceived through the prism of a member of the minority – of an Armenian from Poland traveling through the Ottoman Empire as a foreign visi-tor and guest. It should be undestood in the context of two worlds, Armenia and Armenian diaspora which are interconnected and in permanent interaction. *Ughegruthyun* is undoubtedly an important testimony of the cultural heyday of the Armenian diaspora in Poland. It represents also a valuable historical, ethnological and sociological source of Armenian history, as well as the history of the Otto-mans and Poland-Lithunia Commonwealth.

Key words

Armenia, Ottoman Empire, Poland-Lithuania, Simeon of Poland, Travel Accounts, Ottoman Armenians, Armenians in Poland

(Partly cited according to the monograph «Simeon of Poland: Travel Ac-counts and Chronicles of Armenian Pilgrim», published in 2016 by Argo, Prague).

نگاهی به تقسیمات اداری ارمنستان باستان

دکتر ادیک باغداساریان

اظهار نظر در باره وسعت قلمرو ارمنستان و هر سرزمین دیگری در زمان های بسیار دور بطور دقیق امکان پذیر نیست اما حدود کلی قلمرو آنها را می توان بر اساس شواهد تاریخی، آثار باستانی، گواهی مورخان، سیاحان، مکاتبات و غیره مشخص نمود.

قلمرو ارمنستان در زمان حکومت آراراتیان یا پادشاهی وان (سده های ۶-۹ پ.م.) که در برخی متون به نام اورارتو، اوراشتو یا آرمنیا ذکر شده و نیز در سده های ششم و پنجم پیش از میلاد و نیز بر پایه گواهی هرودوت و گزنفون تاریخنگاران نامدار یونانی، کتیبه های هخامنشی در بیستون و نیز کتیبه های میخی اورارتو مشخص می گردد.

بر پایه گواهی هرودوت، مرز غربی ارمنستان را رود فرات تشکیـــل می داد و این مرز به سوی جنوب شرقی و در طول جاده شاهنشاهی تا ۳۲۰ کیلومتر ادامه می یافت و تا جنوب دریاچه وان کشیده شده و در شمال آن سرزمین رشته کوه های پونتوس واقع بود.

مهمترین منبع تاریخی در باره ارمنستان در زمان حاکمیت هخامنشیان (۳۳۰-۵۱۹ پ.م.) اثر گزنفون زیر عنوان «آناباسیس» است (یا معروف به بازگشت ۱۰،۰۰۰ نفری) که تاریخنگار نامدار در آن در باره بازگشت سپاه ۱۰،۰۰۰ نفری یونان از طریق ارمنستان و ترابوزان به یونان (۴۰۱-۴۰۰ پ.م.) گزارش می دهد.



فلات ارمنستان

گواهی گزنفون در باره ارمنستان موثق است ، زیرا خود او در این سرزمین شاهد تحولات سپاه یونان بوده و همه دیده های خود را به رشته تحریر در آورده است. برپایه گواهی او ارمنستان در زمان وی به آرمنیای شرقی و آرمنیای غربی تقسیم می شد و هر یک از این دو بخش به ساتراپ نشین جداگانه تعلق داشت.

در زمان حکومت سلوکیان سده های (۲-۴پ.م.) تنها بخشی از ارمنستان تحت حاکمیت آنان قرار داشت. ارمنستان در این زمان شامل سه بخش اصلی ارمنستان صغیر (هایک کوچک)، سوفن (سوپک) و ارمنستان بزرگ (هایک بزرگ) بود. ارمنستان بزرگ در این زمان تحت حاکمیت سلسله ارمنی **یرواندیان** قرار داشت.

در باره وسعت قلمرو ارمنستان بزرگ یا هایک بزرگ نظرات گوناگونی مطرح شده است. برپایه نظر هوبشمان ارمنی شناس نامدار آلمانی (برپایه آگاهی های استرابن)، ارمنستان (غیر از ارمنستان صغیر) تنها شامل ۴ استان از ۱۵ استان می شد: یعنی هایک چهارم، آغزنیک، توروبران و آیرارات. لیکن پژوهشهای بعدی نشان دادند که غیر از این چهار استان، سرزمین های موک و روشتونی واقع در جنوب دریاچه وان نیز در زمان سلوکیان جزو ارمنستان بزرگ بودند.

در سال ۱۸۹ پیش از میلاد آرتاشس اول (۱۶۰-۱۸۹پ.م.) سلسله پادشاهی ارمنستان بنام **آرتاشسیان** را بنیان نهاد. ارمنستان در این زمان شامل استان های زیر بود:

- پایتاکاران
- سیونیک
- واسپوراکان
- آیرارات
- گوگارک
- تایک
- هایک علیا
- توروبران
- هایک چهارم
- آغزنیک
- موگک

- کورچک
- اوتیک
- آرتساخ

در واقع قلمرو اصلی ارمنستان در زمان آرتاشسیان شامل ۱۴ استان از ۱۵ استان ارمنستان در زمان **اشکانیان ارمنی** بود. (برپایه گواهی استرابن).

بنا به گواهی استرابن ساکنان ارمنستان بزرگ به زبان واحد ارمنی سخن می گفتند. شایان یادآوری است که در این زمان سه پادشاهی ارمنی وجود داشت: ارمنستان بزرگ (تحت حکومت آرتاشسیان)، سوفن، ارمنستان صغیر یا هایک کوچک.

در زمان **تیگران بزرگ** پادشاه ارمنستان، ناحیه ۷۰ جلگه که معادل استان **پارسکاهایک** بود مجدداً به ارمنستان پیوست و آنگاه سوفن نیز با ارمنستان بزرگ متحد شد. البته تیگران بزرگ دست به جهان گشایی زد و مرزهای قلمرو خود را در جنوب به حوالی همدان در شمال به دریای سیاه، در شرق به دریای خزر و در غرب به دریای مدیترانه رساند. مسلماً بخش بزرگی از قلمرو جزو تصرفات وی تلقی می شود و نمی توان آنها را جزو قلمرو اصلی ارمنستان قلمداد نمود.

ارمنستان باستان شامل ۱۵ استان بود که جمعاً دارای ۱۹۷ ناحیه یا شهرستان می شد. در نقشه های باستانی، از ۶ رشته کوه، ۱۰ قله، ۳ دشت مرتفع، ۴ دشت، ۶ دریاچه، ۸ جزیره (دریاچه های وان و زووک)، ۲۵ رودخانه بزرگ و ۸ رود کوچک یاد می شود. از ۴۹ منطقه مسکونی شامل ۲۲ شهر و ۱۱ شهرک و ۳ روستا و ۱۳ دژ یاد شده است. جمعاً ۳۶۱ نام جغرافیایی آگاهی ها مربوط به نقشه های جغرافیایی ارمنستان هستند که در سده های ۱۸-۱۷ در آمستردام و ونیز چاپ شده اند.



ارمنستان در زمان تیگران بزرگ ۹۵-۵۵ پ.م.

در زمان باستان ارمنستان بزرگ شامل استانهای زیر بود:

۱- استان آیرارات (۱۵- استان مرکزی)- ۴۰،۱۰۵ کیلومترمربع شامل ۲۳ شهرستان

۲- توروبران(استان۴) ۲۵،۰۰۸ کیلومترمربع شامل ۱۷ شهرستان

۳- واسپوراکان (۸) ۴۰،۸۷۰ کیلومترمربع شامل ۳۵ شهرستان

۴- سیونیک (۹) ۱۵،۲۳۷ کیلومترمربع شامل ۱۲ شهرستان

۵- هایک علیا(۱) ۲۳۸۶۰کیلومترمربع شامل ۹ شهرستان

۶- هایک چهارم (استان ۲) (سوفن) ۱۸۸۹۰ کیلومترمربع شامل ۸ شهرستان

۷- آغزنیک (۳) ۱۷،۵۳۲ کیلومترمربع شامل ۱۱ شهرستان

۸- موگک (۵) ۲،۹۶۲ کیلومترمربع شامل ۸ شهرستان

۹- کورچک یا کورچایک(۶) ۱۴،۷۰۷ کیلومترمربع شامل ۱۱ شهرستان

۱۰- پارسکاهایک(۷) ۱۱۰۱۰ کیلومترمربع شامل ۹ شهرستان

۱۱- پایتاکاران (۱۱) ۲۱،۰۰۰ کیلومترمربع شامل ۱۰ شهرستان

۱۲- آرتساخ (۱۰) ۱۱،۵۲۸ کیلومتر مربع شامل ۱۲ شهرستان

۱۳- اوتیک (۱۲) ۱۱،۳۱۵ کیلومترمربع شامل ۸ شهرستان

۱۴- گوگارک(۱۳) ۱۶،۷۶۵ کیلومترمربع شامل ۱۶ شهرستان

۱۵- تایک (۱۴) ۱۰،۱۷۹ کیلومترمربع شامل ۸ شهرستان

جمع ۲۸۰،۹۶۸کیلومترمربع ۱۹۷ شهرستان



۱۵ استان ارمنستان

البته این اعداد و ارقام مربوط به وسعت ارمنستان همواره ثابت نبود و در سال ۶۶ پیش از میلاد ۳۱۲،۷۹۵ کیلومتر مربع بود. اما در سالهای میانی ۳۸۷-۳۷ میلادی بالغ بر ۲۸۵،۱۹۵ کیلومتر مربع می شد.از این میان:

ارمنستان مرزبانی ۱۳۴،۱۶۱ کیلومترمربع

ارمنستان بخش بیزانس ۳۹،۶۵۰ کیلومترمربع

استان ماراتس آمور ۷،۳۲۷ کیلومترمربع

میانرودان ارمن ۲۷،۶۰۰ کیلومترمربع.

تقسیمات اداری ارمنستان غربی
تحت اشغال ترکیه عثمانی

دکتر ادیک باغداساریان

همانند سایر کشورهای اشغالی ترکیه، ارمنستان غربی و استان های ارمنی نشین در ولایات ارزروم، بایزید، قارص، آخالسخا، وان، دیاربکر، سباستیا، قیصریه و بخش ارمنی کیلیکیه (حوزه های پاشایی آدانا و ماراش) واقع بودند.

تا پیش از انعقاد عهد نامه آدریاناپل (۱۸۲۹) تقسیمات اداری ارمنستان غربی و بخش ارمنی کیلیکیه به شرح زیر بود:

۱- استان ارزروم شامل کارین (ارزروم)، تکمان، باسن، تورتوم، اسپر، بابرد(بایبورد)، درجان، ارزنجان، کاماخ (کماخ)، کغکیت، غوزونجان.

۲- استان بایزید شامل بایزید، دیادین، خنوس، آلاشگرد، خمور، توپراغ قلعه، ناهین.

۳- استان قارس (قارس یاکارس) شامل کارس، کاغزوان، کغیان، زاروشاد، خوجوان، نواحی غربی شوراگیال.

۴- استان آخالسخا (چلدر) شامل آخالسخا، نریمان، اولتی، فنسگرد، تاوسگرد، چلدر، جاواخت، آغشور، پوسخوو، ایمر سفلا و علیا، آردانوچ، اردهان، کسیلیم، برداگاراک و غیره.

۵- استان وان شامل، وان، خوشاب، جولامرک، خلات، آرزکه، آرچش، برکری، باغش (بیتلیس) ، خیزان، موش، چرخا، اسبابرد، آغیاکیس، موکس.

۶- استان دیاربرکر (خارجیان آن را آمید، آمد اما ارمنیان آن را تیگراناگرد می نامیدند) شامل آمد، هانی، میافارقین، خاربرد، سیجار، اسنفرید، سورک، ارکانی، آناده، هیسنی کئوی، چاپاغجور، ساقمان، جرمک، کولب، ایلکیس، بنبک، بردارگاراک، بالو و غیره.

قابل توضیح است که سلطان سلیم اول یاووز با قول تامین شرایط آزادانه زندگی به کردهای ایران، آنها را به این استان مهاجرت داده در ناحیه تیگراناگرد اسکان داد. پیش از مهاجرت کردان، تنها ارمنیان، آسوریان و تعداد قلیقی ترک و یا یونانی در این استان زندگی می کردند.

۷- استان سواز یا سیواس (سباستیا) شامل نواحی سواز، آماسیا، بوغوک، چوروم، جانک، دیوریک، آرابگیر.

۸- استان آدانا (در کیلیکیه) شامل آدانا، تارسون (تارسوس)، آلانیا، ایچیل، سیس، اوزیر، بیلان.

۹- استان ماراش شامل ماراش، ملاتیه، (ملیتینه)، سامات (ساموسات)، گرگر.

غیر از اینان برخی نواحی دیگر نیز ارمنی نشین بودند و جز مناطق ترابوزان، قیصریه، نیکته به شمار می رفتند.

ولایت های پاشانشین به چند سنجک تقسیم می شدند که توسط بیگ های سنجک اداره می شدند. این مقام ها از پاشا تا زیر دستانش کاملاً قابل تملک بوسیله ارتشاء بود تا حدی که این مقام ها را گاهی برای فـــروش اعلام می کردند. با این حال مسیحیان حق برخورداری از هیچ مقام ارشدی را نداشتند. مقام های اداری و حکومتی صرفاً جزو امتیازات مسلمانان بود.

برای اعطای مقام ها نه تنها سلطان ها رشوه می گرفتند بلکه وزیر اعظم، مادر سلطان، پاشاها و زیر دستانش هر قدر که می توانستند با اخذ رشوه مقام ها را به فروش می رساندند.

در سه دهه نخست سده ۱۹ کماکان حکومت های نیمه مستقل محلی کردها وجود داشتند و تلاش می کردند کاملاً استقلال یابند از جمله حکومت های محلی باغش، جولامرگ، جزیره، سلیمانیه، وستان، برکری، درسیم، خوشاب (محمودیه)، حکیاری، بالو و غیره. وسیعترین آنها باغش بود[1].

در دهه های پایانی سده ۱۹ تقسیمات اداری ارمنستان غربی را چندین بار تغییر داد لیکن همواره این اصل را مد نظر داشت که ارمنیان در هیچ مکانی اکثریت تشکیل ندهند. در اواخر دهه ۱۸۶۰ بخش اعظم ارمنستان غربی در استان ارزروم (کارین) واقع بود و برخی نواحی آن نیز در استان های دیاربکر (تیگراناگرد) و سباستیا (سواز یاسیواس) تقسیم شده بودند.

استان ها به سنجک و سنجک ها به کازا و اینها به نواحی تقـــــسیم می شدند.

استان یا ولایت کارین (ارزروم) به هفت ناحیه تقسیم شده بود: کارین، چلدر، قارص، بایزید، وان، موش و ارزنجان.

[1] – تاریخ ارمنستان. جلد ۵. ایروان: ۱۹۷۴. ص ۶۵-۶۳.

شش ولایت ارمنی در حکومت عثمانی

ولایت های پاشانشین به چند سنجک تقسیم می شدند که توسط بیگ های سنجک اداره می شدند. این مقام ها از پاشا تا زیر دستانش کاملاً قابل تملک بوسیله ارتشاء بود تا حدی که این مقام ها را گاهی برای فـــروش اعلام می کردند. با این حال مسیحیان حق برخورداری از هیچ مقام ارشدی را نداشتند. مقام های اداری و حکومتی صرفاً جزو امتیازات مسلمانان بود.

برای اعطای مقام ها نه تنها سلطان ها رشوه می گرفتند بلکه وزیر اعظم، مادر سلطان، پاشاها و زیر دستانش هر قدر که می توانستند با اخذ رشوه مقام ها را به فروش می رساندند.

در سه دهه نخست سده ۱۹ کماکان حکومت های نیمه مستقل محلی کردها وجود داشتند و تلاش می کردند کاملاً استقلال یابند از جمله حکومت های محلی باغش، جولامرگ، جزیره، سلیمانیه، وستان، برکری، درسیم، خوشاب (محمودیه)، حکیاری، بالو و غیره. وسیعترین آنها باغش بود[1].

در دهه های پایانی سده ۱۹ تقسیمات اداری ارمنستان غربی را چندین بار تغییر داد لیکن همواره این اصل را مد نظر داشت که ارمنیان در هیچ مکانی اکثریت تشکیل ندهند. در اواخر دهه ۱۸۶۰ بخش اعظم ارمنستان غربی در استان ارزروم (کارین) واقع بود و برخی نواحی آن نیز در استان های دیاربکر (تیگراناگرد) و سباستیا (سواز یاسیواس) تقسیم شده بودند.

استان ها به سنجک و سنجک ها به کازا و اینها به نواحی تقـــــسیم می شدند.

استان یا ولایت کارین (ارزروم) به هفت ناحیه تقسیم شده بود: کارین، چلدر، قارص، بایزید، وان، موش و ارزنجان.

پس از جنگ روس و ترکیه در ۷۸-۱۸۷۷ ولایت ارزروم به چهار استان کارین، وان، حکیاری و موش تقسیم شد. در سال ۱۸۷۹ استان های درسیم و خاربرد یا معموره العزیز تشکیل شدند. در ۱۸۸۰ درسیم به استان خاربرد و اما حکیاری به استان وان منضم شدند.

در سال ۱۸۶۶ ارمنستان غربی به استان های ارزروم، خاربرد، دیاربکر، درسیم، بیتلیس (باغش)، وان، حکیاری و سیواس و در سال ۱۸۹۵ به استان های وان، بیتلیس، دیاربرک، خاربرد، سیواس و ارزروم تقسیم شد.

بدین سان در اواخر دهه ۹۰ سده ۱۹ تقسیمات اداری ارمنستان غربی به صورت زیر بود:

۱- استان وان با نواحی وان و حکیاری.

---

[1] - تاریخ ارمنستان. جلد ۵. ایروان: ۱۹۷۴. ص ۶۵-۶۳.

۲- استان بیتلیس با نواحی بیتلیس، گنجی، موش و سغرد.

۳- استان دیاربکر با نواحی دیاربکر، آرغنی- مادن و ماردین.

۴- استان ارزروم با نواحی ارزروم، بایزید و ارزنجان.

۵- استان خاربرد با نواحی خاربرد، درسیم و ملاتیه یا ملیتینه.

۶- استان سیواس (سواز) با نواحی سواز، آماسیا، قره حصار و توکات یا یودوکیه.

وسعت این شش استان بالغ بر ۲۷۰،۲۰۰ کیلومتر مربع بود.

کیلیکیه باستانی در اواخر سده ۱۹ به دو استان آدانا و حلب تقسیم شده بود.

برپایه قانون ترکیه در سال ۱۸۷۰ استان توسط «والی» ، ناحیه توسط «متصرف»، شهرک توسط «قائم مقام»، قریه توسط «مدیر» اما روستا بوسیله «مختار» یا «رئیس» اداره می شد. این مقام ها با تایید سلطان، وزیر اعظم و وزیر امور داخله تعیین می شدند.

دستگاه حکومت دائماً ساکنان مسیحی را تحت فشار قرار می داد و حکومت و خود سلطان کاربرد واژه «ارمنستان» را ممنوع کرده بودند.